«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

07.05.2019թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Պարոն Գնել Սանոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Սանոսյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12- րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Մարզում կա՞ն համայնքներ, որոնք ունեն վարկեր առևտրային բանկերում կամ փոխառություններ վերցրած որևէ սուբյեկտից: Եթե այո, տրամադրել այդ համայնքների ցանկը, վարկի կամ փոխառության գումարի չափը, վարկատու կամ փոխառություն տրամադրած սուբյեկտի վերաբերյալ տվյալներ:
2. Կա՞ն համայնքային ենթակայության կազմակերպություններ, որոնք ունեն վարկեր առևտրային բանկերում կամ փոխառություններ վերցրած որևէ սուբյեկտից: Եթե այո, տրամադրել այդ կազմակերպությունների ցանկը, վարկի կամ փոխառության գումարի չափը, վարկատու կամ փոխառություն տրամադրած սուբյեկտի վերաբերյալ տվյալներ:
3. Եթե համայնքները կամ ենթակայությամբ գործող կազմակերպությունները վերցրել են վարկեր կամ փոխառություններ, ապա ի՞նչ նպատակով, ի՞նչ է գրավադրվել: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, կազմակերպությունների:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան